

### 5.3. 2012 թվականի փետրվար ամսվա հիդրոոլորոնության և սառածության պայմանները Հայաստանում

Ըստ ՀՀ արտակարգ իրավիճակների նախարարության հիդրոոլորոնության և սառածության մոնիթորինգի պետական ծառայության տեղեկատվության, փետրվարին օդի միջին ամսական ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում եղել է նորմայից ցածր 2-3 աստիճանով, ՀՀ Տավուշի և Սյունիքի մարզերում՝ 1-2 աստիճանով:

Միջին տասնօրյակային ջերմաստիճանն առաջին տասնօրյակում եղել է նորմայից ցածր 3-6 աստիճանով, երկրորդ և երրորդ տասնօրյակներում՝ 2-5 աստիճանով:

Միջին առավելագույն ջերմաստիճանը Սյունիքի հովիտներում և ՀՀ Տավուշի մարզում կազմել է +3 +6°C, ՀՀ Լոռու մարզում և Արարատյան դաշտավայրում՝ 0 +4°C, Սյունիքի նախալեռներում՝ 0 +2°C, ՀՀ Շիրակի, Կոտայքի և Գեղարքունիքի մարզերում, Արագածոտնի և Վայոց ձորի լեռներում՝ -2 -7°C:

Ամենաբարձր ջերմաստիճանը դիտվել է փետրվարի 29-ին: Սյունիքի հովիտներում գրանցվել է +18 +20°C, Արարատյան դաշտավայրում՝ +11 +16°C, ՀՀ Տավուշի մարզում՝ +10 +14°C, Արագածոտնի և Սյունիքի նախալեռներում՝ +8 +12°C, ՀՀ Լոռու մարզում՝ +7 +9°C, ՀՀ Շիրակի, Կոտայքի և Գեղարքունիքի մարզերում, Արագածոտնի և Վայոց ձորի լեռներում՝ 0 +5°C:

Միջին նվազագույն ջերմաստիճանը ՀՀ Շիրակի, Կոտայքի և Գեղարքունիքի մարզերում, Արագածոտնի և Վայոց ձորի լեռներում կազմել է -13 -18°C, ՀՀ Լոռու մարզում՝ -10 -15°C, Սյունիքի նախալեռներում՝ -7 -12°C, Արարատյան դաշտավայրում և Արագածոտնի նախալեռներում՝ -6 -11°C, ՀՀ Տավուշի մարզում՝ -5 -10°C և Սյունիքի հովիտներում՝ -2 -5°C:

Ամենացածր ջերմաստիճանը տարածաշրջանների մեծ մասում դիտվել է փետրվարի 12-ին: ՀՀ Շիրակի, Կոտայքի և Գեղարքունիքի մարզերում, Արագածոտնի և Վայոց ձորի լեռներում գրանցվել է -24 -29°C (Աշոցք գյուղում (ՀՀ Շիրակի մարզ)՝ -34°C), ՀՀ Լոռու մարզում՝ -22 -27°C, Սյունիքի նախալեռներում՝ -15 -20°C, ՀՀ Տավուշի մարզում՝ -13 -18°C, Արարատյան դաշտավայրում և Արագածոտնի նախալեռներում՝ -10 -15°C, Սյունիքի հովիտներում՝ -3 -8°C:

Ամսական տեղումների քանակը ՀՀ Շիրակի մարզում կազմել է նորմայի 142-150%-ը, ՀՀ Կոտայքի մարզում՝ 160-116%, ՀՀ Գեղարքունիքի մարզում՝ 71-153%, ՀՀ Արագածոտնի մարզում՝ 84-223%, ՀՀ Լոռու մարզում՝ 70-150%, ՀՀ Տավուշի մարզում՝ 61-100%, Արարատյան դաշտավայրում՝ 51-199% և ՀՀ Սյունիքի մարզում՝ 57-138%:

Փետրվարի 1-2-ին, 8-9-ին, 11-ին, 16-ին և 18-ին տարածաշրջանների զգալի մասում, 5-ին, 7-ին, 15-ին, 17-ին, 19-ին և 28-29-ին առանձին վայրերում դիտվել են տեղումներ, լեռնային և նախալեռնային շրջաններում՝ ձյան տեսքով: Փետրվարի 8-ին և 10-ին ուժեղ ձյուն է տեղացել ք. Ջերմուկում (ՀՀ Վայոց ձորի մարզ) և ք. Երևանում (21 մմ/12 ժամ), փետրվարի 10-ին՝ Անանուն լեռնանցքում, ք. Հրազդանում և Ֆանտան գյուղում (ՀՀ Կոտայքի մարզ), ք. Ջերմուկում (19 մմ/12 ժամ):

Փետրվարի 29-ի դրությամբ ձյան ծածկույթի բարձրությունն Արագած բարձր լեռնային կայանում (3229 մ) կազմել է 171 սմ, Ամբերդ գյուղում (ՀՀ Արմավիրի մարզ)՝ 136 սմ, ք. Ջերմուկում՝ 102 սմ, ք. Հրազդանում և Աշոցք գյուղում՝ 80 սմ, ք. Ապարանում (ՀՀ Արագածոտնի մարզ)՝ 76 սմ, Ամասիա գյուղում (ՀՀ Շիրակի մարզ)՝ 68 սմ, Ֆանտան գյուղում՝ 57 սմ, Սեմյոնովկա գյուղում (ՀՀ Գեղարքունիքի մարզ)՝ 55 սմ, մնացած շրջաններում՝ 5-20 սմ: ՀՀ Տավուշի մարզում, Սյունիքի նախալեռներում, Սյունիքի հովիտներում, ք. Արարատում և ք. Արտաշատում

## 5. ՍՈՑԻԱԼ-ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՀԱՏՎԱԾ

(ՀՀ Արարատի մարզ), ք.Գյումրիում (ՀՀ Շիրակի մարզ) և Շորժա գյուղում (ՀՀ Գեղարքունիքի մարզ) ձյան ծածկը բացակայել է:

Փետրվարի 1-ին, 5-10-ին, 12-ին, 15-19-ին և 21-22-ին Անանուն լեռնանցքում, ՀՀ Կոտայքի մարզում և Արարատյան դաշտավայրի առանձին կայաններում դիտվել է մառախուղ՝ 50-500 մ տեսանելիությամբ: Փետրվարի 1-ին, 8-ին, 10-ին և 19-ին տեղ-տեղ դիտվել է քամու ուժգնացում, արագությունը՝ 13-18 մ/վրկ, պոռթկումները՝ 16-25 մ/վրկ:

Հանրապետության գետերի մեծ մասում միջին ամսական ելքերը կազմել են նորմաների 90-130%-ը:

Սևանա լճի մակարդակը փետրվար ամսվա ընթացքում բարձրացել է 7 սմ-ով և փետրվարի 29-ի դրությամբ կազմել 1900.19 մ, որը 2011թ. փետրվարի 28-ի համեմատ բարձր է 23 սմ-ով: